

APM
2-5809a

E - MAR 2010

2-5809a

ՀԱԽԶ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

374.4
4-21
1.0

ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

107

I. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԿԱ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԻՍՄԱՆ ԳՈՐԾԸ
ՏԵՂԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

II. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՀԵՌԱԿԱ
ՌԻՍԱՆՈՂՆ ՐԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԿԵՏԵՐԻ
ՄԱՍԻՆ

III. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

374.4
4-21

21556

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՇԵՌԱԿԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԳՈՐԾԸ
ՏԵՂԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեռնարկություններով)

Սոցիալիստական արդյունաբերութեան արագ զարգացումը, ինդուստրիայի նոր գիգանտների շինարարությունը և գոյութիւն ունեցող ձեռնարկությունների վերակառուցումը մեր բոլորը Միութեան առաջ խնդիր են դնում՝ պատրաստել նշանակալից թվով այնպիսի մասնագետներ, վորոնք կարողանան ապահովել մեր ձեռնարկությունների տեխնիկական ղեկավարութիւնը, տեսական գիտելիքների տիրապետման հետ միասին տիրապետեն նաև նրա գործնականը և իրականացնեն այն կյանքով:

Առկա կրթական հիմնարկների, այդ թվում նաև ստացիոնար ԲՏՈՒՀ-ների շարքում, հեռակա կրթութեան սխեսմը, առանձնապես շինարարական գծով մասնագետներ պատրաստելու գործում, խաղում և հակայական դեր:

ՀՍՈՒՀ Մանր Արդյունաբերութեան Կոմիսարիատին յենթակա Յերեանի Հեռակա Շինարարական Ինստիտուտը և Հեռակա Շինարարական տեխնիկումը, վորոնք ունեն համարապետական նշանակութիւն, նպա-

տակ ունեն պատրաստել մեր շինարարության համար ինժեներաց - տեխնիկական ուժեր հետազոտ կարգով: Մյուս կողմից նրանք հիմնականում բարձրացնում են մեր շինարարական արդյունաբերության մեջ աշխատող մասնագետների վերակր:

Հեռակա Շին. Ինստիտուտը պատրաստում է շինարար ինժեներներ 3 մասնագիտությամբ. 1) Աշխատանքի ղեկավարներ, 2) Կառուցողներ, 3) Նախագրծողներ:

Հեռակա Շին. տեխնիկումը՝ շինարար տեխնիկներ: Ամբողջ ուսուցումը տարվում է Առկա Շինարարական Ինստիտուտի և Շինարարական տեխնիկումի ուսումնական սլաններով և ծրագրերով, վորոնք հաստատված են ղերեկտիվ ուս. մարմինների կողմից:

Ուսման տեղությունը՝ սահմանված է՝ Հեռակա Ինստիտուտի համար 3 և կես տարի, իսկ Հեռակա տեխնիկումի համար 3 տարի:

Ավարտողներն ստանում են ինժեներ - տեխնիկի կոչում և վսյեյում այդ կոչումների համար սահմանված բոլոր տեսակի իրավունքներն ու արտոնությունները: Ուսումը տարվում է հետևյալ սիստեմով. -

- 1) Հեռակա յոդներին մատակարարվում են բոլոր անհրաժեշտ ձեռնարկները (դասագրքեր, մեթոդական նամակներ, ուսումնական նյութեր և այլն):
- 2) Թված Հեռուսհիմնարկները ղեկավարում են հեռակա յոդների աշխատանքները՝ ուսման նյութերը և գրավոր աշխատանքները մշակելու և յուրացնելու տեսակետից:
- 3) Ստուգում են հեռակա յոդների մշակած գրավոր աշխատանքները:

4) Գրավոր և բանաղոր հրահանգներ են տալիս հեռակա յոդներին ուսման նյութի բովանդակությունը վերաբերող հարցերի և ուսման աշխատանքի ինքնուրույն մեթոդների մասին:

5) Կադմակերպում են կոնսուլտացիաներ, լաբորատոր պարասպմունքներ, ուսումնական կոնֆերանսներ, արտադրական պրակտիկա և ուսումը հեշտ յուրացնելու այլ միջոցներ:

Հեռակա Շին. Ինստիտուտի և Հեռակա շին. տեխնիկումի ուսումը տարվում է յերկու յեղանակով. 1) հեռակա կարգով (ուսման նյութի ինքնուրույն մշակում, գրավոր աշխատանքների ստուգում, գրավոր կոնսուլտացիա). 2) առկա կարգով (առկա լրացուցիչ ուսուցում, բանավոր կոնսուլտացիա, լաբորատոր օրարասպմունքներ, արտադրական պրակտիկա, ուսումնական կոնֆերանսներ և այլն):

I. Հեռուս. Ա. Ուսումն. Ց. Շին.

Հեռակա Շինարարական Ինստիտուտի և Հեռակա Շինարարական տեխնիկումի ուսանողների հեռակա ուսուցման գործը ղեկավարելու համար, Հայաստանի Ծանր Արդյունաբերության կոմիտարիատին կից ստեղծված է Հեռակա Ուսուցման հատուկ բաժին, առանձին ապարատով:

Հեռուսբաժինը հեռակա յոդների հեռակա ուսուցումը իրականացնում է հետևյալ ձևով. -

- 1) Ամեն մի ղիմողի ուղարկում է ընդունելություն ստուգողական աշխատանք: Դիմողը այդ ստուգողական աշխատանքը (հայոց լեզու, մաթեմատիկա, Փիզիկա)



39680-63

կատարելուց հետո, իր աշխատանքն ուղարկում է Հեռուստաբաժնին վորի Ուսումնական մասը վերոշեղով հեռակայողի պատրաստականությունն ու գիտելիքները, ընդունում է նրան համապատասխան կուրս:

2) Սրան համապատասխան ել կազմվում է այն դրաֆիկան, ուր նշվում է՝ թե հեռակայողը հետագա ուսման նյութը ըստ ամիսների ինչ կարգով պիտի մշակի: Նշված դրաֆիկը ուղարկվում է հեռակայողին և սահմանում ուսման նյութի այն պարտադիր նորման, վոր պիտի մշակի ուսանողը մի ամսվա ընթացքում, ինչպես և նշում առաջադրությունների մշակման հաջորդականությունը:

3) Մշակվելիք ուսման նյութը ուղարկվում է հեռակայողին այդ դրաֆիկայի համաձայն:

4) Ուսման նյութում յեղած ցուցմունքների համաձայն, հեռակայողը մշակում է այդ նյութը և իր գրավոր ստուգողական աշխատանքները ուղարկում Հեռուստաբաժնին: Գրավոր աշխատանքով պարզվում է՝ թե հեռակայողը վորչափով է յուրացրել սվյալ նյութը:

5) Ուղարկված գրավոր — ստուգողական աշխատանքները ստուգում են հեռակայողի աշխատանքները ղեկավարող դասատու — ռեցենզենտները և նշում նրանց կատարած սխալները, զնահատում նրա աշխատանքի վորակը (կազմում են դրախոսական) և տալիս համապատասխան ցուցմունքներ նրա հետագա աշխատանքների մասին:

6) Դասատու — ռեցենզենտները, բացի գրախոսականից, հեռակայողին ուղարկում են գրավոր կոնսուլտացիա նաև այն հարցերի մասին, վորոնք առաջ

են գալիս հեռակայողի կողմից ուսման նյութը մշակելու ժամանակ և չեն պարզվում, կամ նրա համար մնում են մութ և այդ հարցերի պատասխանն ստանալու համար հեռակայողը ստիպված է լինում դիմել դասատու — ռեցենզենտին կամ Հեռուստաբաժնի Ուսումնական մասին: Նման հարցումներն, իհարկե, ուղարկվում են գրավոր:

II. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Առկա Ուսուցման աշխատանքի խնդիրները.

Միանգամայն ակներև է, վոր հեռակայողներին միայն հեռակա կարգով ուսում տալը — բավական չէ, վորովհետև դա հարկ յեղած եֆեկտը չի տա վոչ հեռակայողի ուսման տեմպի և վոչ ել նրա աշխատանքի վորակի տեսակետից:

1. Ուսման նյութը մշակելու պրոցեսի ընթացքում հեռակայողի համար կարող են ծագել այնպիսի հարցեր, վորոնք պահանջում են անմիջական և լրիվ լուծում: Գրախոսի (ռեցենզենտի) գրավոր կոնսուլտացիան, նախ, առաջ կրերի պատասխանի ձգձգում (իսկ սրա հետ միասին նաև նյութի մշակման ձգձգում) և, յերկրորդ, չի կարող լրիվ կերպով լուսարանել այն բոլոր հարցերը, վորոնք հետաքրքրում են հեռակայողին: Այստեղից ել բղխում է բանավոր կոնսուլտացիայի կազմակերպման, և այն ել անհասպղ կազմակերպման, անհրաժեշտությունը (այն է՝ դասատուի անձնական զրույցը՝ հեռակայողի հետ):

2. Մի շարք դիսցիպլիններ (ֆիզիկա, քիմիա) պահանջում են գործնական մշակում, վորովհետև այդ դիսցիպլինների յուրացումը միմիայն թեորետիկ

ձևով չի կարող բավարար արդյունքներ սենենալ: Այստեղից ել ծագում ե հեռակայողների լարորատոր պարասմունքների կազմակերպման անհրաժեշտությունը:

3. Մի շարք մասնադիտական դիսցիպլիններ (տեխնոլոգիա) պահանջում են պարտադիր արտադրական աշխատանք, ուր հեռակայողը պիտի կարողանա իր ուսումնասիրության յենթակա մասնադիտության դիտա - թեորետիկական գիտելիքները մի կողմից կիրառել արտադրական պրոցեսի մեջ և մյուս կողմից - ձեռք բերած գիտա-թեորետիկական գիտելիքների հիման վրա՝ ուսումնասիրել և վերլուծել իր ձեռնարկության արտադրական պրոցեսը:

Այստեղից ել առաջ ե գալիս հեռակայողի արտադրական պրակտիկայի կազմակերպման անհրաժեշտությունը այն ձեռնարկության մեջ, ուր նա աշխատում ե:

4. Սահմանված ժամանակի ընթացքում հեռակայողը մշակում ե կուրսի վորոչ մասը: Յեղնելով դրանից, անհրաժեշտ ե, վոր Հեռուարածինը ստուգի հեռակայողի ընդհանուր առաջադիմությունը կուրսի այդ մասից և ամրացնի անցածը հեռակայողի հետ մի շարք ուսումնական պարասմունքներ կազմակերպելու միջոցով: Իս ձեռք ե բերվում միևնույն քանակի նյութ մշակած հեռակայողների վորոչ լսմարկների համար առկա ուսումնական կոնֆերենցիաներ կազմակերպելու միջոցով:

Ուսումնական կոնֆերենցիաները (կոնֆերենցիայի ժամանակ հեռակայողները արտադրությունից ազատ-

վում են) կարող են լինել կամ միանվագ, մոտավորապես 1 ամիս ժամկետով, կամ ըստ Հեռուարածնի արտադրական պլանի, տարբեր նվազներում:

Առկա Ուսման աշխատանքի կազմակերպումը:

Հեռուարածնի հեռակայողների ցրվածությունն ամբողջ Հանրապետության մեջ գրեթե վոչ մի բացասական ազդեցություն չի թողնում հեռակա ուսուցման վրա, վորովհետև ուսման նյութերը, ձեռնարկները, գրախոսականները և այլ բոլոր տեսակի հրահանգները ուղարկվում են վոստով և հեռակայողների հեռավորությունը առանձին վորևև նշանակություն չունի, յեթե չհաշվենք այն, վոր հեռավորությունը աղբում ե միայն այդ նյութերը տեղերն ուղարկելու և հասնելու արագության վրա:

Այդ հաշվի յե առնում Հեռուարածնը, և ձգձգումներից խուսափելու համար, նյութերն ուղարկում ե շտապ ու տպարանից ստանալուն պես ու այն հաշվով, վոր հեռակայողը մինչև իր ներկայացրած դրավորի պատասխանն ստանալը, աշխատելու նյութ ունենա և չընդհատի ուսումը: Այլ կերպ ե դրված հեռակայողի դործը առկա ուսուցման, այն ե առկա պարասմունքների սպասարկման տեսակետից: Մի շարք հանրահայտ պատճառների շնորհիվ, մենք դեռ ևս հընարավորություն չունենք, բոլոր հեռակայողների համար անմիջապես կենտրոնում կոնսուլտացիաներ, լսաբորատոր պարասմունքներ և արտադրական պրակտիկաներ կազմակերպել: Յեթե այդ բանը հնարավոր ե և իմաստ ունի Յերևանի հեռակայողների համար, ու-

կայն դա հնարավոր չե և իմաստ ել չունի Յերեանից 100-ավոր կելումետրներով հեռու գտնվող մյուս հեռակայողներէ համար, վորովհետև դա առաջ կբերի անընդհատ յերթեկեկութուն, ժամանակի անտեղի ծախսում և վոր ամենազլխավորն է — գրեթե արտադրութունից անընդհատ հեռացում, վորը միանգամայն հակասում է Հեռակա Ուսուցման դրվածքին, այն է՝ ուսում՝ առանց արտադրութունից կըտրվելու:

Հեռուսրածնի կետերի կազմակերպումն ամեն մի քաղաքում կամ շրջանում, ուր կան մի խումբ կամ մի քանի հեռակայողներ, նույնպես աննպատակահարմար է, և այն ել հետևյալ պատճառներով. —

ա) Հեռուսրածնի հեռակայողների թիվը (բացի մի քանի խոշոր կենտրոններից) ամեն մի քաղաքում, շրջանում կամ ձեռնարկութեան մեջ այնքան ել մեծ չե (հաճախ 3-5 հոգի մի տեղում): Այդ պատճառով ել գրեթե հնարավոր չե կազմակերպել խորակային հաճախումներ կոնսուլտացիոն և լաբորատոր պարապմունքներին, մանավանդ վոր նրանք ունեն դիտութեան տարբեր մակարդակ, տարբեր առաջադիմութուն, աշխատանքի տարբեր տեմպեր և խիստ շատ են ծանրաբեռնված տնտեսական, կուսակցական, պրոֆմիութենական և այլ հասարակական աշխատանքներով:

բ) Շրջանում կազմակերպված կետը հեռակայողներին կհարկադրի միշտ շրջան գնալ, այսինքն նորից արտադրութունից կտրվել: Բացի դրանից, հեռակայողը միշտ ել հնարավորութուն չի ունենա (վորոչ ո-

րբերի) շրջան գնալ, կոնսուլտացիա ստանալ կամ լաբորատոր պարապմունքեր անցկացնել:

գ) Բաժնի կետեր կազմակերպելը կառուցացնի բաժնի կետերի աշխատակիցների թե՛ հաստիք (չտաս) պահելու անհրաժեշտութուն, կպահանջի այդ կետերի համար հատուկ շինք և այլն, վորոնք կառվեցան հեռակա ուսուցման ծախսերը անխմաստ վերածախսերով և այլն:

Յեղնելով այս բոլորից, միանգամայն պարզ է, վոր հեռակայողները ուսման մեջ մաքսիմալ եֆեկտ մտցնելու համար անհրաժեշտ է հեռակայողի առկա ուսումը (կոնսուլտացիա, լաբորատոր պարապմունքներ և այլն) մտեցնել անմիջապես հեռակայողի աշխատանքի վայրին, ուր նրա առկա ուսուցումը տարվեր տեղի դասատուների միջոցով Հեռակա Ուսրածնի ընդհանուր ղեկավարութեամբ:

Հեռակա Ուսուցման բաժինն այս ուղղութեամբ ներկայումս վերակառուցում է պերիֆերիայում գտնվող հեռակայողների առկա ուսուցումը՝ կոնսուլտացիաները, լաբորատոր պարապմունքները և արտադրական պրակտիկան անմիջապես տեղափոխելով այն ձեռնարկութեան մեջ, ուր աշխատում է հեռակայողը:

Նկատի ունենալով այն, վոր Հեռուսրածնի ուսանողների մեծ մասը մեր արդյունաբերութեան մեջ աշխատող բանվոր — ծառայողներ են, և ծանրաբեռնված են ու իրենց տրամադրութեան տակ շատ քիչ ժամանակ ունեն, ուստի և հիմնարկութունը հեռակայողներին ձեռնարկութեան մեջ պիտի սպասարկի ավելի ճկուն ձևերով, (կոնսուլտացիաները և լաբորատոր պարապմունքները կազմակերպելով այնպի-

սի ժամանակ, վոր հեռակայողը կարողանա այդ ժամանակից ոգտվել ու այդ աշխատանքներին մասնակցել:

III. Ձեռնարկութեան ԱՆՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՆԼԻՔՆԵՐԻՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԵՌՈՒԱԿԱՅՈՂԻ ՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

Իր բանվոր - ծառայողին Հեռակա Ուսնարկ գործուղած ձեռնարկութեանը շահագրգռված և նրանով, վոր Հեռուսնարկը վորոչ ժամանակից հետո տա նրան տեսականորեն ու գործնականորեն պատրաստված, համապատասխան մասնագետ: Այստեղից ել բղխում և այն դրութեանը, վոր ձեռնարկութեանը պիտի ամեն տեսակի ունութեան ցույց տա Հեռուսնարկին, վորպեսզի նա կարողանա կատարել զանազան տեսակի ուսումնա-կազմակերպչական աշխատանքներ և այլն:

Ձեռնարկութեանը պետք և ինքն ինքնուրույն կերպով կամ Հեռուսնարկի մասնակցութեամբ ձեռք առնի մի շարք միջոցներ թե հեռակայողների աշխատանքների տեմպերը բարձրացնելու, դրան աջակցելու և թե նրանց ուսման վորակը բարելավելու ուղղութեամբ: Միայն ձեռնարկութեան աջակցութեան շնորհիվ և այդ պայմանների գոյութեան դեպքում Հեռուսնարկը կարող և իսկապես ապահովել հեռակայողներին ուսումը և տալ ժամանակին ու վորակյալ շրջանավարտներ:

Ձեռնարկութեան դերն այդ գործում, հիմնականում, հանգում և հետևյալին. —

1. Մտեղծել կապ Հեռուսնարկի հետ և իրազեկ լինել իր հեռակայողներին ուսման հարցերին.

2. Հսկել հեռակայողի սւսման վրա և գտնել միջոցներ նրա սւսման ինտենսիվութեանը բարձրացնելու համար:

3. Հեռակայողին լամեն տեսակի տնտեսական, կուս - սրբֆիլիթենական աշխատանքներից բեռնաթափ անել և տեղծել նրա սւսման համար նպաստավոր պայմաններ - տրամադրելով ամսական միջինում 75-90 ժամ, վորի համար անհրաժեշտ և. —

ա) Մտքախմբել չափով խուսափել հեռակայողին մի տեղից մի այլ տեղ տեղափոխելուց, մասնավոր յերբ դա կապ ունի նրա ընտրած մասնագիտութեան փոփոխութեան հետ:

բ) Հնարավորութեան տալ, վոր հեռակայողը լրիվ կերպով ոգտագործի իր հանդատի օրերը.

գ) Ժամանակ տրամադրել նրան - կոնսուլտացիաներից և լաբորատոր պարապմունքներից ոգտվելու համար:

դ) Հաշվի առնել հեռակայողի անհատական ծանրաբեռնվածութեանը և հարց հարուցել կուս-սրբֆիլիթենական կազմակերպութեանների առաջ՝ հեռակայողին մասնակիորեն և վորոչ ժամանակով բեռնաթափ անելու համար:

ե) Խուսափել հեռակայողին հաճախակի գործուղումներ ուղարկելուց, վորը նրան կարծւ և ուսումից:

4. Հեռուսնարկի ուսանողներին տրամադրել ձեռնարկութեան կամ նրա ֆարգործուսի լաբորատորիաները, գծագրական կաբինետները՝ (բյուրո) սւսման անհրաժեշտ պարագաներով՝ պարապմունքներ անցկացնելու համար:

5) կազմակերպել հեռակայողների համար կոնսուլ-
ացիաներ, լաբորատոր պարապմունքներ և գործնա-
կան աշխատանքներ, ներգրավելով դրա մեջ ձեռնար-
կության այն դասատուներին ու մասնագետներին,
վորոնք իրենց աշխատանքները վարում են Հեռուս-
իմնարկի մեթոդական ղեկավարութայամբ:

Հեռակայողներին պատասխանելու և նրանց օւսման
ընթացքի վրա հսկելու համար, անկախ նրանց քանա-
կից, ձեռնարկութայան կադրերի բաժինը ընտրում է
հատուկ մարդ (պատասխանատու) և նրան նշանակում
հեռակայողների կետի վարիչ, ղեկավար նրա վրա ձեռ-
նարկութայան հեռակայողների օւսման գործի ամբողջ
պարտականութունն ու պատասխանատվութունը:
Կետի վարիչը կազմակերպում է ձեռնարկութայան հե-
ռակայողների օւսման գործը և պատասխանատու յե
դրա համար:

Յեթե ձեռնարկութունն օւնի հեռակայողների
Հենման կետ, այդ դեպքում այդ պարտականու-
թյունները կարող են դրվել նրա վարիչի վրա: Հեն-
ման կետ չլինելու դեպքում այդ պարտականություն-
ները դրվում են Փարգործուսի վարիչի կամ ձեռնար-
կութայան կադրերի սեկտորի աշխատակիցներից վորեւե
մեկի վրա:

IV. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ՊՐՈՖԵՍՐՈՒԹՆԱԿԱՆ ՑԵՎ ՀԱ-
ՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԻԻ-
ՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԳՈՐ-
ԾՈՒՄ:

Հեռուսհիմնարկի օւսանողները շատ են ծանրա-
բեռնված անասական, կուսակցական և հասարակա-

կան աշխատանքներով: այդ աշխատանքները հնարա-
վորությունն չեն տալիս նրանց նորմալ կերպով սովո-
րել: Հոճախակի գործուղումները, մորթիլիզացիանե-
րը, անդամիտիումները, մեծ, իսկ հաճախ նաև չափից
ափելի շատ ծանրաբեռնությունը կուսակցական, հա-
սարակական աշխատանքներով, և այլն, շատ ժամա-
նակ են խլում հեռակայողից և բնավ չեն նպաստում
նրա օւսման տեմպի բարձրացման: Հեռուսարստիկ տրա-
մադրութայան առկ յեղած անդեկություններից յերե-
վում է, վոր հեռակայողը սովորաբար պարապում է
յերեկոնները՝ ժամը 10-11-ից մինչև զիչերվա ժամը
1-2-ը կամ առավոտյան ժամը 5-7-ը, վորն իհարկե
նորմալ չէ:

Յոսել հեռակայողների շրիվ բեռնաթափման մա-
սին, իհարկե չի կարելի: Սնհրաժեշտ գործուղումնե-
րը, քաղաքական կարևոր կամպանիաներին մասնակ-
ցելը, մի շարք հասարակական, քաղաքական պարտա-
կանությունների կատարումը պարտադիր է ամեն մի
հեռակայողի համար: Սակայն մի շարք միջոցառում-
ներ կարող են հեռակայողին այնպիսի հնարավորու-
թյուններ տալ, վոր նա իր ժամանակը բաշխի այնպես,
վոր կարողանա նաև իր օւսման գործով զբաղվել:
Կուսակցական, պրոֆիտիթենական և հասարակական
կազմակերպությունները պետք է հեռակայողի օւսու-
մը դիտեն վորպես նրա կարևորագույն քաղաքական
բեռնվածություն:

Յեղնելով սրանից, վերևում նշված կազմակերպու-
թյունները պետք է ամենալուրջ ուշադրություն դարձ-
նեն Հեռուսհիմնարկի օւսման գործի վրա:
Կուսակցական, պրոֆիտիթենական և հասարա-

կական կազմակերպությունների վրա դրվում են հետևյալ խնդիրները. -

ա) կուսկազմակերպությունների վրա. 1) Հսկել հեռակայողների ուսման գործի վրա՝ նրանց ուսման ընթացքի և ստաջադրվումների մասին սիստեմատիկաբար տեղեկություններ ստանալու միջոցով: Նույնը անել և հեռակայողների միջոցով:

2) Հսկել տնտեսական ժարձիկների վրա, վոր նրանք ժամանակին կատարեն հեռակայողների սպասարկման գծով իրենց վրա դրված պարտականությունները և կանոնադր կերպով սպասարկեն նրանց:

3) Ամեն կերպ բեռնաթափ անել հեռակայողներին ափսոսող կուս-պրոֆիտիկանական ծանրաբեռնությունից, մանավանդ կոնսուլտացիաների, լաբորատոր պարասպեկտիկների, արտադրական պրակտիկայի և ուսումնական կոնֆերենցիաների ժամանակ:

4) Զարկ տալ ձեռնարկության հեռակայողների հարվածայնության ու սոցիոլոգիայի նրանց ուսուցումը ափսոսող արդյունավետ դարձնելու համար. կազմակերպել սոցիոլոգիա մյուս ձեռնարկությունների հեռակայողների միջև և հսկել նրա իրականացման վրա:

բ) Ինժեներա - տեխնիկական աշխատավորներից կազմակերպել 1) մասնագետների կոլեկտիվ, հեռակայողներին ուսուցնող - մեթոդական ոգնություն ցույց տալու և նրանց համապատասխան ելիզոդիկ կոնսուլտացիա տալու համար:

2) Ընտրել համապատասխան մասնագետներ հեռակայողներին կանոնադր կոնսուլտացիա տալու և լաբորատոր պարասպեկտիկները դեկավարելու համար:

Արտադրական պրակտիկայի ժամանակ ամեն մի հեռակայողի ամրացնել հատուկ մասնագետներին:

4) Մասնագետների մեջ կազմակերպել սոցիոլոգիան հեռակայողներին ափսոսող կերպով սպասարկելու համար:

V. ՈՒՍՈՒՄԸ ՏԵՂԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՎԱՐԵԼՈՒ ԾԱԽՍԵՐ.

Կոնսուլտացիաների, լաբորատոր պարասպեկտիկների և արտադրական պրակտիկայի ծախսերը վճարում է Հեռուստաբաժինը:

Հեռման կետի վարիչը իր աշխատավարձը, վորը կազմում է նրա հիմնական աշխատավարձի 25 տոկոսը, ստանում է այն ձեռնարկությունից, վորի հեռակայողներին նա սպասարկում է:

Հեռակայողների առկա կրթության գործը տեղերում կազմակերպելու բոլոր տեսակի հարցումներին պատասխանն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Յերևան - Հեռուստաբաժին:

VI. ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԻ ՀԵՌԱԿԱՅՈՂՆ ԻՐ ՈՒՍՄԱՆ ԳՈՐԾԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Հեռակա ուսուցման գործն ափսոսող լավ կազմակերպելու համար ամենից շատ շահագրգռված պիտի լինի ինքը հեռակայողը: Փոխադարձ կապ հաստատելով Հեռուստահիմնարկի հետ, հեռակայողը նպաստում է հեռակա կրթության կազմակերպման գործին հետևյալ ձևով. -

1) Հետևում է, վոր Հեռուստաբաժինը ժամանակին ուղարկի իրեն ուսման նյութերը, առաջադրությունները:

39680-63



ները, գրավոր աշխատանքները, գրաֆիկները, հրահանգները և այլն: Տեղեկություններ և խնդրում Հեռուստաբաժնից իր առաջադիմության մասին և այլն:

2) Արձանագրում է, համապատասխանում է արդյոք ունեցնողների կազմած գրախոսականի վորակը իր մշակած գրավոր աշխատանքներին (պարզ և արդյոք իր համար այդ գրախոսականը, նա լիովին ընդգրկում է այն բոլոր հարցերը, վոր շոշափում են իր աշխատանքի մեջ և այլն):

3) Ընդգծում է իրեն ուղարկված ուսումնական նյութերի, առաջադրությունների, ձեռնարկների, մեթոդական նամակների վորակը և այլն:

4) Հետևում է՝ ճիշտ և արդյոք կազմակերպված կապը Հեռուստաբաժնի և իր միջև. ժամանակին և արդյոք ստանում իր հարուցած հարցերի ու զանազան տեսակի հարցումների պատասխանները, սպառում են արդյոք այդ պատասխանները իր հարցումներին և այլն:

Վերևում նշածի վերաբերմամբ նկատած բոլոր թերությունների, նրանց վերացման բոլոր անհրաժեշտ ձեռնարկումների մասին և այլն, հեռակայողը հաշվառման հատուկ բլանկների, անկետաների և նամակների միջոցով հայտնում է Հեռուստաբաժնին:

Հեռակա ուսման գործը տեղերում կազմակերպելու, հեռակայողին բեռնաթափ անելու և այլ աշխատանքների գծով տեղական կազմակերպությունների հետ ունեցած փոխհարաբերության ընթացքում, հեռակայողը հետևում է՝

1) վոր տնտեսական մարմինները ժամանակին կազմակերպեն կոնսուլտացիաները, լաբորատոր պա-

րամուշները, արտադրական պրակտիկաները և այլն:

2) Հետևում է կոնսուլտացիաներ, լաբորատոր պարամուշներ և այլն անցկացնելու որացուցային պլանի կիրառմանը:

3) Արձանագրում է՝ համապատասխանում են արդյոք դասատուների կատարած կոնսուլտացիաները, լաբորատոր պարամուշները և այլն, Հեռուստաբաժնի պահանջներին և ուսման նյութերին:

4) Հետևում է, վոր հեռակայողների կետը պատշաճ կերպով սպասարկի նրանց:

5) Տնտեսական, պրոֆմիտիբենական, կուսակցական մարմինների առաջ հարց և հարուցում իրեն բեռնաթափելու մասին և ձգտում է, վոր այդպիսին իրականացվի պայմանագրերով ու դեկրետավորված վորոշումներով և այլն:

6) Հետևում է, վոր տնտեսական մարմինը ժամանակին կատարի Հեռուստաբաժնի հանդեպ ունեցած իր պարտավորությունները:

Տեղի ուսման գործում նկատված բոլոր թերությունները հեռակայողը արձանագրում և անմիջապես հայտնում է համապատասխան տեղական կազմակերպություններին և Հեռուստաբաժնին և միևնույն ժամանակ ձգտում նրանց վերացման: Մյուս կողմից, հեռակայողը պարտավոր է խնամքով և բարեխղճորեն կատարել այն բոլոր պարտականությունները, վոր նա հանձն է առել Հեռուստաբաժնի և իրեն գործուղած կազմակերպության առաջ, չթուլատրելով վոր մի խուսափում կամ ինդում, ինչպիսի դժվարությունների ել վոր նա հանդիպի:

Տնտեսական - կուսակցական և պրոֆմիտվենական մարմիններին հեռակա ուսուցման ընթացքին իրազեկ սրահելու համար հեռակայողը պարտավոր է վաղ պահաս քան 3 ամիսը մի անգամ այդ մարմիններին ներկայացնել դրավոր հաշվետվություն կամ տալ բանավոր մանրամասն զեկուցում :

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՀԵՌԱԿԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեռակայողների ուսման դործը տեղերում կազմակերպելու կանոնադրություն համաձայն արեն մի ձեռնարկություն իրեն կից կազմակերպում է հեռակայողների սպասարկման հատուկ կետ և այդ մասին իրազեկ դարձնում Հեռուսքամբն :

Կետը վարում է հետևյալ աշխատանքները. -

1) Ողնում է հեռակայողներին այն բոլոր հարցերում, վորոնք ծագում են ուսման նյութը մշակելու պրոցեսի ժամանակ (ուսման պլանի սահմաններում) հեռակայողների համար եպիդոդիկ և սխտեմատիկ կոնսուլտացիաներ կազմակերպելու միջոցով :

2) Կազմակերպում է լաբորատոր պարապմունքներ և արտադրական պրակտիկա, հիմք ընդունելով Հեռուսքամբնի ուսումնական պլաններն ու ծրագրերը :

3) Ակտիվացնում է Հեռուսքամբնի հեռակայողների աշխատանքը, ուսումնամեթոդական ուղևություն և ցույց տալիս յետ մնացող կամ բավարար չափով ակտիվություն չունեցող հեռակայողներին. կազմակերպում է խմբակային և անհատական կոնսուլտացիաներ : Հեռուսքամբնի հետ միասին և ինքնուրույն կերպով մի-

ընդներ ե ձեռք անտամ հեռակայողների ուսման ակտիվացման համար. ծավալում ե նրանց մեջ սոցմրցությունն ու հարվածայնությունը և հեռակայողների ուսման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով միջնորդություն ե հարուցում համապատասխան տնտեսական, կուսակցական և արհեստակցական մարմինների առաջ և այլն:

4) Ստեղծում ե համապատասխան պայմաններ հեռակայողների ուսման դործը վարելու համար (չենք, դրադարան, ձեռնարկներ, պիտուլքներ և այլն):

5) Կազմակերպում ե, յեթե դա հնարավոր ե լինում, հեռակայողների կոլեկտիվ պարապմունքներ, յեղնելով հեռակայողների ուսման վորակի միևնույն մակարդակից և տեմպերից:

6) Հաշվի յե առնում Հեռուսբաժնի հեռակայողներին և այն դասատուներին, վորոնք սպասարկում են նրանց: Հաշվի յե առնում կետի աշխատանքները և սահմանված ձևով տեղեկություններ ուղարկում Հեռուսբաժնին:

Իրեն կից կետ ունեցող ձեռնարկությունը ընտրում ե համապատասխան մարդ (կետի վարիչ) և նրան հանձարարում կետի աշխատանքները: Նշանակված աշխատակիցը լիակատար կերպով պատասխանատու յե ձեռնարկության հեռակայողների սպասարկումը պատշաճ կերպով տանելու համար:

Կետի վարիչի պարտականությունների կատարումը դրվում ե հենման կետի վարիչի (յեթե ձեռնարկության մեջ կա հենման կետ), Փարզործուսի վարիչի կամ ձեռնարկության կադրերի բաժնի աշխատակից-

ներից վորևե մեկի վրա: Կետի վարիչի վրա, հիմնականում, դրվում են հետևյալ պարտականությունները. —

1) Հեռուսբաժնի բոլոր հեռակայողների հաշվառում.

2) Հարորատոր պարապմունքների և կոնսուլտացիաների համար — չենքերի սպահովում և պատշաճ հսկողություն այդ աշխատանքների նախապատրաստման վրա.

3) Կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունքների կազմակերպում, — այսինքն՝

ա) կոնսուլտացիաներ և լաբորատոր պարապմունքներ անցկացնելու համար մանկավարժական կազմի ընտրություն:

բ) Կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունքների որացուցային պլանների կազմում և նրանց հաղորդումը հեռակայողներին ու դասատուներին:

գ) Հսկողություն կոնսուլտացիաներն ու լաբորատոր պարապմունքները ժամանակին կատարելու և դասատուների կողմից նրանց պատշաճ կերպով սպասարկելու վրա:

դ) Հեռակայողների հաճախման հաշվառում՝ կոնսուլտացիաներին և լաբորատոր պարապմունքներին:

4) Հսկողություն՝ ուսման նյութերն ու առաջադրությունները ժամանակին մշակելու վրա.

5) Հեռակայողների ուսման ինտենսիվությունը բարձրացնելու յեղանակների վորոնում և Հեռուսբաժնի ու տեղական կազմակերպությունների զանազան ձեռնարկումների անցկացում՝ հեռակայողների ուսման դործը սպահովելու ուղղությամբ:

6) Կապ Հեռուսթաթնի և տեղական կազմակերպությունների հետ՝ հեռակայողների ուսման հարցերի վերաբերյալ:

7) Ձանազան տեսակի ինֆորմացիոն նյութերի և անկէտաների ստացումն ու բաշխումն ըստ պատկանելույն:

8) Կետի աշխատանքների ընդհանուր հաշվառում և տեղեկութայունների ուղարկումը Հեռուսթաթնին: Յեղնելով թված պարտականութայուններից, կետի վարիչի աշխատանքը օահմանվում է հետևյալ ձևով. —

I. ՀԵՌԱԿՍՑՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Կետի վարիչը պետք է հաշվառման յենթարկի թե արդեն սովորող և թե նոր ընդունվող բոլոր հեռակայողներին, նրանց ընդունվելու որից սկսած:

Հեռակայողների հաշվառումը կետի վարիչը կազմակերպում է նախ՝ սովորող հեռակայողներին և նոր ընդունվածների մասին Հեռուսթաթնից տեղեկութայուններ ստանալու և յերկրորդ՝ հեռակայողների հին կազմի մասին ձեռնարկութայան աշխատակիցներին հարց ու փորձ անելու ժիջոցով, վորովհետև կարող է պատահել, վոր ժի քանի հեռակայողներ, անցնելով աշխատանքի տվյալ ձեռնարկութայան մեջ, այդ մասին չըհայտնեն Հեռուսթաթնին և այսպիսով հաշվին հեռակայող այն հիմնարկութայան մեջ, ուր նրանք առաջ աշխատում եյին: Վերջին դեպքում և հետագայում այլ հիմնարկներից հեռակայողներ տեղափոխվելու դեպքում, կետի վարիչը, հաշվառման յենթարկելով նը-

րանց, պետք է այդ մասին անպայման հայտնի Հեռուսթաթնին:

Այն դեպքում, յերբ Հեռուսթաթնի հեռակայողը ձեռնարկութայունից հեռանում է, կետի վարիչը, նրան իր մոտ հաշվառումից հանելով, պարտավոր է անմիջապես հաղորդել Հեռուսթաթնին, ցույց տալով այն ձեռնարկութայան անունն ու հասցեն, ուր տեղափոխվել է հեռակայողը:

Քանի վոր հեռակայողների թիվը ձեռնարկութայան մեջ աշխատելու ել մեծ չի ընկում, ուստի և հաշվառման կատարումը առանձին և հատուկ քարտերով պարտադիր չէ: Կետի վարիչը հեռակայողների մասին պետք է ունենա հետևյալ տեղեկութայունը. —

Հեռագրի և հետազոտման կենտրոնի	Ծանոթություններ
	Յեզբ
1920 թ. 9 մսյ	
Հեռագրի և ձեռնարկի կենտրոնի	Յեզբ
(Ձեռագրի) 3-ը	
զանազան մեթոդներով	
տրամախոս և թվաբանական	
տրամաբանական և թվաբանական	
(տրամաբանական և թվաբանական)	
մեթոդ և տրամաբանական	
դասակարգ	
Մաթեմատիկայի և ֆիզիկայի	
մաթեմատիկայի և ֆիզիկայի	
վեժնի տոմ 1920	

II. ՏԵՂԱՐԱՆ՝ ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԼԱՌՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Հեռակալողների կոնսոլիդացիաների համար առանձին շենք (տեղարան) չի պահանջվում: Կարեվորը միայն այն է, վոր կոնսոլիդացիան կատարվելու մոմենտին այն շենքը, ուր պիտի կոնսոլիդացիան տեղի ունենա, ազատ լինի և նախորդը հատկացվի հեռակալողների կոնսոլիդացիայի համար:

Անմիջապես ձեռնարկութայն մեջ կատարվելից լարորատոր պարասպունքների դեպքում, հեռակալող, ներին պիտի տրամադրվեն լարորատորիաներ, վորպեսզի հեռակալողը այնտեղ համապատասխան դործնական աշխատանքներ կատարի: Գրեթե մեր բոլոր ձեռնարկություններում կան Փարբիկա — դործարանային լարորատորիաներ: Մի շարք ձեռնարկություններ իրենց սիստեմում ունեն ՖԱՐԳՈՐԾՈՒՄՆԵՐ և այլ ուսահիմնարկներ, վորոնք ունեն քիմիական, ինչպես և ֆիզիքական լարորատորիաներ: Այդ լարորատորիաները պետք է տրամադրվեն հեռակալողներին՝ ոգտվելու համար: Բացի դրանից, կետի վարելը պետք է հող տանի, վոր պարասպունքների համար նշանակված որերին լարորատորիաները լինեն կահավորված համապատասխան ուսումնական պիտույքներով, ունակտիվներով և այլն:

Յեթե ձեռնարկությունն իր տրամադրութայն տակ լարորատորիաներ չունի, կամ թե յեղած լարորատորիաները պարասպունքների համար անհարմար են, այդ դեպքում կետի վարելը պիտի համաձայնութայն զա հեռակալողներ ունեցող մի այլ ձեռնարկութայն

հետ և ոգտադործի նրա լաբորատորիան: Իսկ յեթե
այդ ել հնարավոր չե, այդ դեպքում, կետի վարիչը
բանակցում է հեռակայողի շրջապատում դստվող տեխ-
նիկումի կամ համապատասխան այլ ուսնիմարկի վար-
չության հետ, և համաձայնության գալիս նրա հետ
այդ աշխատանքները նրանց լաբորատորիաներում կա-
տարելու համար: Կետի վարիչը պետք է բոլոր միջոց-
ները ձեռք առնի հեռակայողներին լաբորատորիանե-
րով ապահովելու համար, վորովհետև լաբորատոր
պարապմունքներից չօգտվող հեռակայողը, իրեն անց-
նելիք դիտցիպլինանս յուրացնելու գործում շատ բան է
կորցնում:

Բացի լաբորատոր պարապմունքներից, անհրա-
ժեշտ է, վոր մի քանի դիտցիպլինների, ինչպես, որի-
նակ, դժագրության ու դժագրական յերկրաչափու-
թյան համար, հեռակայողը ունենա դանազան տեսակի
դժագրական սրբագամներ, և ոգտվի նրանցից: Ուս-
տի և կետի վարիչը պետի ձգտի և հեռակայողի հա-
մար ձեռք բերի իրավունք՝ ձեռնարկությունների գը-
ժագրական կաբինետներից ոգտվելու համար:

III. ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻՈՆ ՅԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊ- ՄՈՒՆՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ:

Հեռուբաժնի ուսման սլաններում նախատեսված
են նաև վորոշ թվով ժամեր՝ հեռակայողների կոն-
սուլտացիոն, լաբորատոր և գործնական աշխատանք-
ների համար: Ուսման տեսակների կազմակերպումը
գըրվում է ձեռնարկության, մասնավորապես նրա կե-
տի վարիչի վրա: Ուսման այդ տեսակների ձեռնարկ կազ-

մակերարումն և ընդհանուր մեթոդական ղեկավարու-
թյունն ու հակողությունը մնում է Հեռուբաժնի վը-
րա:

ա) Մանկավարժական կազմի ընտրություն.

Կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունք-
ների համար կետի վարիչը ընտրում է համապատաս-
խան կոնսուլտանտներ (Պագրոթուախ, տեխնիկումնե-
րի դասատուներից, կամ ձեռնարկության ինժեներա-
անիսնիկական կադմից և այլն) այն դիտցիպլինների հա-
մար, վորոնցից, ըստ ուսման սլանների, նախատես-
վում են կոնսուլտացիաներ և լաբորատոր պարապ-
մունքներ: Կոնսուլտանտների և լաբորանտների ընտ-
րությունը բոլոր դիտցիպլինների համար միանգամից
չի կատարվում, այլ տեղի յե ունենում աստիճանա-
բար, վորովհետև հեռակայողը բոլոր դիտցիպլինները
միանգամից չի անցնում, այլ անցնում է այդպիսին
վորոշ հաջորդականությամբ:

Կետի վարիչի նախատեսած կոնսուլտանտների և
լաբորանտների թեկնածությունը համաձայնեց-
վում է հեռակայողների հետ և հաստատվում ձեռնար-
թյան կադերի Բաժնի կողմից:

Համաձայնեցնելուց և հաստատելուց հետո, կոն-
սուլտանտները և լաբորանտները անցնում են աշխա-
տանքի:

Կոնսուլտանտներն ու լաբորանտներն իրենց աշխա-
տանքի ընթացքում ղեկավարվում են այն հրահանգ-
ներիով, վորն ուղարկում է նրանց Հեռուբաժինը:

Կետի վարիչը հաշվի յե առնում հեռակայողնե-

բին սպասարկող մանկավարժական կազմը և նրա աշխատանքները: Դա անհրաժեշտ և նրանց հետ հաշիվները վավերացնելու համար: Հաշվառման վորոշ ձևեր ժըռոցներու առանձին կարիք չկա, բայց քանի վոր դասատուների վարձատրությունը պիտի կատարվի ժամերի հաշվով, ուստի անհրաժեշտ և իմանալ, թե այս կամ այն կոնսուլտանտը տվյալ ամսուս քանի ժամ կոնսուլտացիա կամ լաբորատոր աշխատանք և կատարել:

Այն դեպքում, յերբ կոնսուլտանտներից կամ լաբորանտներից վորևե մեկը ազատվում և աշխատանքից, կետի վարիչը պարտավոր և այդ մասին հայտնել Հեռուսքաթին, նշելով, թե ինչ պատճառի հետևանքով և նա աշխատանքը թողել և հեռացել: Նոր նշանակված դասատուն համաձայնեցվում և հայտատվում և այն կարգով, վորի մասին խոսվեց վերևում, և նրա քարտը կետի վարիչը ուղարկում և Հեռուսքաթին:

բ) կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունքների որացուցային պլանի կազմումը

Կետի վարիչն ամեն ամիս կազմում և Հեռուսքաթին հեռակայողների կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունքների որացուցային պլանը: Որացուցային պլանը կազմելիս կետի վարիչը հիմք և ընդունում առաջադրությունների մշակման գրաֆիկան (վոր Հեռուսքաթինն ուղարկում և ամեն մի հեռակայողի և կետի վարիչին), վորովհետև այդ գրաֆիկայում ցույց և տրվում, թե տվյալ ամսուս հեռակայողը վոր առարկայի վոր հ. հ. առաջադրությունները պիտի մշակի:

Հեռուսքաթինը կոնսուլտացիաները և լաբորատոր

պարապմունքները կազմակերպում և յեղներով հետևյալ սկզբունքներից. —

1. կոնսուլտացիաների մի մասը՝ հեռակայողների համար ունի դրույթային բնույթ, այսինքն՝ նախքան առաջադրության մշակմանն անցնելը, հեռակայողին բացատրվում և այդ առաջադրության բնույթը, նրա թիչ թե շատ ավելի դժվար տեղերը, և ցույց տրվում նյութին ամբողջապես տիրապետելու յեղանակը: Ի՞նչու լութային կոնսուլտացիաներ չպետք և, սակայն, կրեն պարապմունքների բնույթ, վորովհետև ամբողջ նյութը հեռակայողը պիտի մշակի ինքնուրույն ձևով: Այդ կոնսուլտացիաները պետք և ծառայեն հեռակայողի համար վորպես ոժանդակ միջոց՝ նյութը շուտափույթ և լավ կերպով տիրապետելու համար: Հեռակայողները պիտի այդ կոնսուլտացիաներին մասնակցեն պարաստիք կերպով:

2. կոնսուլտացիայի մի մասն էլ կրում և բացատրական բնույթ: Այդ կոնսուլտացիային հեռակայողը դիմում և այն դեպքում, յերբ նյութը մշակելիս հանդիպում և նրա մեջ, չնայած արդեն ստացած դրույթային կոնսուլտացիային, մի շարք այնպիսի դժվարությունների, վորոնք կարող են կոնսուլտանտի բացատրության: Այդպիսի կոնսուլտացիաներ նպատակահարմար և կազմակերպել ամեն մի առարկայից, վոր նախատեսված և պիտի մշակի հեռակայողը տվյալ ամսուս:

Նման կոնսուլտացիաներին պիտի ներկայանան այն բոլոր հեռակայողները, վորոնք հանդիպում են դժվարության այս կամ այն առարկայի վորևե առաջադրություն մշակելու ժամանակ:

3. Լաբորատոր պարասպիտաններին անցնում է հեռակայողը առաջադրությունը թեորեաիկ կերպով ժշակելուց հետո կամ նրան զուգընթաց: Հեռակայողների ներկայութիւնն այդ պարասպիտաններին պարտադիր է վորովհետեւ առանց առաջադրությունները զործնական կերպով ժշակելու, հեռակայողը ստուգված չի համարվի:

Այսպիսով, կետի վարիչը, խմանալով, թե հեռակայողը տվյալ ամսում ինչ առարկաներ ու առաջադրութիւններ պիտի ժշակի, կազմում է կոնսուլտացիաների և լաբորատոր պարասպիտանների որացուցային պլանը, վորի մեջ մտցնում է. — 1. Իրույթային կոնսուլտացիաներ՝ ցույց տալով, թե հեռակայողները ինչ առարկաների համար պիտի ներկայանան կոնսուլտացիայի (յեղնելով դրաֆիկից, ուր նշվում է թե տվյալ ամսում վոր առարկայի ինչ առաջադրութիւններ պիտի ժշակվեն): 2. Ամեն մի առարկայի վերաբերյալ բացատրական կոնսուլտացիաներ, վոր նախատեսվում է կազմակերպել այն առարկայի վերաբերյալ, վորը պիտի ժշակվի տվյալ ամսում և վորի կոնսուլտացիայի պահանջը զգում են բոլոր հեռակայողները, և 3. Լաբորատոր պարասպիտաններ՝ ցույց տալով, թե վոր առարկայից պիտի լաբորատոր պարասպիտաններ տեղի ունենան և վոր հեռակայողները պիտի պարտադիր կերպով ներկայանան այդ պարասպիտաններին:

Որացուցային պլանն անպայման համաձայնեցվում է (ժամանակը, ժամերը, ներկայանալու հարստվորութիւնները սահմանելու համար և այլն) հեռակայողների և դասատուների հետ և իր վերջնական տեսքով ունի մոտավորապես հետևյալ ձևը. —

ՈՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Հեռակայողներին կոնսուլտացիաներ և լաբորատոր պարասպիտաններ անցկացնելու համար

ապրիլ, 193 թ.

Կոնսուլտացիա և լաբորատոր պարասպիտանը	Առարկա	Առաջադրութիւն (դրոսեր)	Մասնավոր վարժի ազգանունը	Չորանի և կատարվում (չենք)	Հրավիրված հեռակայողների քանակը	Յերբ են կանչվում
5 16-18	Մաթեմատիկա	1 2 3	Պետրոսյան	Կարկը անկյուն	Մամակյան Ներսիսյան Սուրենյան	ժ. 16-ին ժ. 16—40 ր. ժ. 17—30 ր.
10 17-19	Լաբորատոր պարասպիտան	Մաթեմատիկա	Ֆիզիկա	Մաթեմատիկա	Վարդաբաբայան Սանդրոսյան	ժ. 17-ին ժ. 17-ին

Կոնսուլտացիա և բարձրագույն դասակարգում	Մասնակցություն (հասցե)	Մասնակցություն	Վերականգնողական (շնորհ)	Հրահանգներ և հրահանգներ	Ցեղեր և կանգնում
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ
Մասնակցություն	Մասնակցություն	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ	Պատվավոր անդամ

Երեսնամյա

Որացուցային պլանը հանձնվում է բոլոր հեռակայողներին և դասատուներին, վորոնք և ամբողջ ամսվա ընթացքում ղեկավարվում են նրանով: Որացուցային պլանը ուղարկվում է Հեռուստաֆանին: Որացուցային պլանը կազմելիս, կետի վարիչին անհրաժեշտ է հաշվի առնել թե հեռակայողների և թե դասատուների ծանրաբեռնվածությունը: Այդ պատճառով էլ որացուցային պլանը պիտի այնպես կազմվի, վոր նույնիսկ ամբողջովին ծանրաբեռնված հեռակայողներն էլ լրիվ կերպով ներգրավվեն ավյալ ամսի կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունքների մեջ:

Առաջադրությունները սխառմատիկաբար ուշ մշակող և յետ մնացող հեռակայողների համար միմիայն կոնսուլտացիաներ կազմակերպելը կարող է բավարար արդյունքներ չտալ: Այդ հեռակայողներին, վորպես ծայրահեղ միջոց, պետք է ժամանակավորապես, անհատական կարգով ամրացնել վորոշ դասատուներին, վորոնք և պիտի պարապեն նրանց հետ որացուցային պլանից դուրս:

Գ) Հսկողութուն կոնսուլտացիաները և լաբորատոր պարապմունքները ժամանակին կատարելու և պատշաճ կարգով նրանց սպասարկումը դասատուների կողմից տանելու վրա:

Կոնսուլտացիաների և լաբորատոր պարապմունքների որացուցային պլանի ժամանակին կիրառումը մեծ մասամբ ապահովում է հեռակայողների ուսման զործի ինտենսիվությունը: Այդ պատճառով էլ կետի

վարիչը պետք է բոլոր միջոցները ձեռք առնի, վոր կոնսուլտացիաներն ու լաբորատոր պարապմունքները կայանան իր ժամանակին և վորպեսզի ամբողջովին ապահովվի թե հեռակայողների և թե դասատուների քանակացությունն այդ աշխատանքներին:

Կետի վարիչը պիտի միջոցներ ձեռք առնի— 1) վոր որացուցային պլանն իր ժամանակին հասնի ամեն մի հեռակայողի և դասատուի:

2) Վոր մինչև կոնսուլտացիան սկսելը ապահովվի համապատասխան շենք, իսկ լաբորատոր պարապմունքների մոմենտին լաբորատորիաներն արդեն ազատ և սրարատ լինեն հեռակայողների պարապմունքների համար:

3) Վորպեսզի հեռակայողները ժամանակին ներկա լինեն, հարկավոր է, վոր նրանք կոնսուլտացիայի կամ լաբորատոր պարապմունքների համար նշանակված յեւրեկոները կամ այդ օրերին ազատ լինեն ամեն տեսակի նիստերից և հասարակական-կուսակցական բեռնվածությունից:

4) Վորպեսզի կոնսուլտանտները և լաբորատոր պարապմունքների ղեկավարները ժամանակին ներկա լինեն կոնսուլտացիաներին և լաբորատոր պարապմունքներին, հեռակայողների աննպատակ սպասելուց խուսափելու համար:

5) Վորպեսզի դասատուն այս կամ այն պատճառով կոնսուլտացիայի կամ լաբորատոր պարապմունքների չներկայանալու դեպքում, փոխարինվի մի ուրիշով: Նա ժամանակին իրագեկ լինելով կոնսուլտացիան կամ հեռակայողների պարապմունքները չկայանալու մասին, պիտի այդպիսին հետաձգի մի այլ ժա-

մանակի համար և վոչ թե լաբորովին վերացնի:

Կետի վարիչը պետք է հետևի, վոր դասատուները կանոնավոր կերպով անցկացնեն կոնսուլտացիաները և լաբորատոր պարապմունքները:

Թե ամեն մի դասատու ինչպես է սպասարկում հեռակայողներին, դա կարելի չէ պարզել հետևյալ ձևով.—

1. Մնձնապես կոնսուլտացիաներին և լաբորատոր պարապմունքներին ներկա լինելու միջոցով:

2) Հեռակայողներին հարց ու փորձ անելու միջոցով:

3) Դասատուների հաշվետվությունները՝ կատարված կոնսուլտացիաների կամ լաբորատոր պարապմունքների մասին ստուգելու միջոցով:

Հեռուստաթիւնը նույնպես հսկում է այդ աշխատանքների վրա, հենվելով հեռակայողների ուղարկած նամակների, դասատուների ներկայացրած հաշվետվությունների և տեղերը զործուղած իր տեսուչների սվյաչների վրա և այլն:

դ) Կոնսուլտացիաներին և լաբորատոր պարապմունքներին հաճախելու հաշվառումը

Կետի վարիչը պիտի մանրամասն հաշվառման յեւթարկի հեռակայողների հաճախումները կոնսուլտացիաներին և լաբորատոր պարապմունքներին: Դա անհրաժեշտ է հետևյալ նպատակների համար.

1) Վորպեսզի իմանանք, թե հեռակայողները վոր չափով են ընդգրկված լաբորատոր պարապմունքների և կոնսուլտացիաների մեջ:

2) Վորպեսզի իմանանք և սարգենք, թե ինչու հեռակայողները չեն հաճախել կոնսուլտացիաներին և լաբորատոր սարապմունքներին:

3) Վորպեսզի հաշվի առնենք, թե ինչպես են կատարվում կոնսուլտացիաների և լաբորատոր սարապմունքների որացուցային պլանները:

4) Հեռուբաժնին համապատասխան տեղեկություններ ուղարկելու համար:

Ամեն մի կոնսուլտացիայի և ամեն մի լաբորատոր սարապմունքի հաշվառումը կատարվում է առանձին (ամեն մի տարեկայից): Հաշվառման համար կատարվելու կարող է ընտրել մի վերևի ձև: Հաշվառման համար, իբրև որինակելի ձև, կարելի չե բերել հետևյալը. —

ՀԱՃԱՆՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Դեկտեմբերի 27-ին կայացած մաթեմատիկայի կոնսուլտացիային հրավիրված հեռակայողներին.

Կոնսուլտանա՝ Պետրոսյան: Կոնսուլտացիայի ընդհանուր տեղուլթյունը՝ յերկու ժամ. (այստեղ ցույց է տրվում այն ժամանակը, Վոր ծախսել է դատատուն, անկախ հեռակայողների ներկայանալուց կամ չներկայանալուց):

Պետրոսյան		Չեխով		Պետրոսյան		Չեխով	
Կոնսուլտացիայի քանակը	Միջին ժամ	Կոնսուլտացիայի քանակը	Միջին ժամ	Կոնսուլտացիայի քանակը	Միջին ժամ	Կոնսուլտացիայի քանակը	Միջին ժամ
1	17 ժ. 30 ր.	1	17 ժ. 50 ր.	20	30 ր.	1	1
2	17 ժ. 50 ր.	1	17 ժ. 50 ր.	1	1	1	1

Կոնսուլտացիայի արդյունքները

Գուցակը կետի վարիչը հանձնում և կոնսուլտացիան կամ պարապմունքն անցկացնող դասատուին, նախորոք նշելով, թե ինչ հեռակայողներ, ինչ ժամանակի համար են հրավիրված: Դասատուն կոնսուլտացիան կամ պարապմունքն անցկացնելուց հետո, նշում և՛ նախ հեռակայողների ներկայանալը, ապա այն, թե վոր հ. հ.—ի առաջադրություններից և կոնսուլտացիա կամ պարապմունք անցի ո՞նեցել և ինչ տևողությամբ ամեն մի հեռակայողի հետ:

Ծանոթություն.— Հեռուբարժինը յեղնում և նրանից, վոր հեռակայողները կետում կոնսուլտացիա յեն ստանում անհատական կարգով, այսինքն դասատուն ամեն մի հեռակայողի կոնսուլտացիա յետախնա առանձին—առանձին, նկատի ունենալով այն, վոր հեռակայողները ծանրաբեռնված լինելով, կոնսուլտացիայի համար շատ ժամանակ հատկացնել չեն կարող: Այդ պատճառով ևլ որացուցային պլանը կազմելիս, կետի վարիչը պետի նկատի ունենա, և ցույց տա զբաժնիկում, թե վոր հեռակայողը ինչ ժամանակ և կոնսուլտացիայի կանչվում: Որինակ՝ հեռակայող Պետրոսյանը կանչվում և ժ. 17-30 ր., և այլն: Այդպիսով, անհատական կարգով կոնսուլտացիա տվող կոնսուլտանտը շատ հեշտ կերպով կարող և հաշվի առնել, թե նա ինչքան ժամանակ և գործադրել ամեն մի հեռակայողի կոնսուլտացիայի համար:

Սա նախատեսված և այն հեռակայողների համար, վորոնք իսկապես ծանրաբեռնված են և զժվար-

բանում են սահմանված կայուն ժամանակում, վոր հարմարեցվում և նրանց հետ, ներկա լինել ընդհանուր կոնսուլտացիաներին և պարապմունքներին: Գերադառլի յե, իհարկե, ընդհանուր կոնսուլտացիան՝ հարցումների ընդհանուր փոխանակության և մտքերի շիման առավելության տեսակետով: Դա կախված և տեղի պայմաններից և կարող ուժերի (կոնսուլտանտների) ժամանակի և այլ հնարավորություններից:

Կոնսուլտացիային կամ պարապմունքին մասնակցող ամեն մի հեռակայող ստորադրում և հաճախման ցուցակը:

Կետի վարիչը դասատուից ցուցակը սատնայով, պարզում և հեռեկայողների կոնսուլտացիաներին և պարապմունքներին չմասնակցելու պատճառները և նշում այդ պատճառները:

Գործուղման կամ հիվանդության կամ վորևե այլ հարգելի պատճառով կոնսուլտացիային կամ պարապմունքներին հաճախելու հնարավորություն չունեցող հեռակայողը նախորոք հայտնում և այդ մասին կետի վարիչին, և վերջինը նկատի ունենալով այդ, պայմանավորվում և նրա և դասատուի հետ ու կոնսուլտացիան նշանակում մի այլ ժամանակում: Նույնպիսի նախազուլացում և անում նաև կոնսուլտացիային կամ պարապմունքին մասնակցելու հնարավորություն չունեցող դասատուն:

Այդ նախազուլացումներն անհրաժեշտ են կետի վարիչին նրա համար, վորպեսզի նա կարողանա նախորոք զգուշացնել և՛ դասատուին, և՛ հեռակայողներին: Առանց հարգելի պատճառի բացակայելը անթույլատրելի յե:

Նախադրուչացման այս կանոնի մասին պետք է իրազեկ դարձնել թե հեռակայողներին և թե դասատուներին :

IV. ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄՇԱԿԵԼՈՒ ՎՐԱ

Հեռուսրաժնից ուղարկված ստաշադրությունները հեռակայողը մշակում է սահմանված ժամկետում՝ Մշակման համար տրվում է 15-30 րոք ժամանակ : Նյութի մշակումն այդ ժամանակում հեռակայողի համար պարտադիր է : Ամեն մի հեռակայող պետք է նշված ժամկետում իր ստացած նյութը մշակի և ներկայացնի պահանջված հարցերի գրավոր պատասխանները : Այդ գրավորների միջոցով Հեռուսրաժնին իրազեկ է դառնում ամեն մի հեռակայողի յուրացման աստիճանին և հետևում է՝ թե նա ինչպես և ինչ չափով է կատարում իր պարտականությունները և իր ուսման պլանը :

Սակայն, անմիջապես, այդ աշխատանքների վրա հսկում է նաև հիմնարկի կետի վարիչը :

Իր ձեռքի տակ ունենալով հեռակայողի գրաֆիկան (հաշվառման քարտը), կետի վարիչը գիտե, թե հեռակայողը ինչ ստաշադրություններ է ստացել և յերբ պիտի մշակի ու ներկայացնի նրանց գրավոր պատասխանները : Նա հետևում է, Վոր հեռակայողները ժամանակին ներկայացնեն այդ աշխատանքները և հրահրում է հեռակայողների վրա : Հեռակայողից ստացած ամեն մի գրավորը նշում է իր գրաֆիկայում և ուղարկում Հեռուսրաժնին, կոնսուլտանտին հանձնելու համար : Յեթե հեռակայողն իր պարտքը չի կատարում,

րում, կետի վարիչը համապատասխան միջոցներ է ձեռք առնում այդ աշխատանքների կատարումն ապահովելու համար : (միջնորդում է հեռակայողին բեռնաթափ անելու մասին, հայտնում է համապատասխան պրոֆ. և կուս մարմիններին և այլն) :

Կետի վարիչը պետք է հետևի նաև հեռակայողի ստաշադրիմության գործին : Առաջադիմության վերաբերյալ տեղեկությունները կետի վարիչը կարող է ստանալ՝

- 1) Հեռուսրաժնից :
- 2) Տեղական դասատուներից, Վոր սպասարկում են կոնսուլտանտներին :
- 3) Հենց իրենց ուսանողներից, ինչպես նրանց հարց ու փորձ անելու, նույնպես և նրանց գրավոր աշխատանքների ռեցենզիաները ստուգելու միջոցով : Այդ ռեցենզիաները գրվում են Հեռուսրաժնի դասատու ռեցենզենտների կողմից ու նշվում, թե հեռակայողն ինչպես է մշակել ուղարկված նյութը (թույլ, բավարար, բավ), ինչ թերություններ կան նրա մշակած նյութի մեջ և այլն :

Վերևում թվածների հիման վրա կետի վարիչը ձեռք է առնում վորոշ միջոցներ՝ հեռակայողի աշխատանքի վորակը բարելավելու և ուսման տեմպը բարձրացնելու համար (նշանակում է լրացուցիչ կոնսուլտացիա և այլն) :

V. ՄԻՋՈՑՆԵՐ ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀՄԱՍՐ

Միանգամայն պարզ է, Վոր ուսման պլանը ժամանակին կատարելու գործի մեջ վճռական դեր է խա-

դում հեռակայողի ցուցադրած տեմպը ստացած նյութերը մշակելու համար:

Մեր հեռակայողները, մեծ մասամբ, ծանրաբուխլած են թե անմիջապես իրենց արտադրական-տրնտեսական և թե հասարակական աշխատանքներով: Հաճախակի գործուղումները զրկում են նրանց ստացած նյութերը ժամանակին մշակելու հնարավորությունից և յերկար ժամանակ կտրում ուսումից, վոր խանգարում է ուսման պլանը ժամանակին կատարելու գործին:

Հետուբաժինն իր կողմից միջոցներ է ձեռք առնում հեռակայողների ուսման ինտենսիվությունը բարձրացնելու համար, այսինքն՝

1) Իր ուսման պլանները և ծրագրերը վերակազմում է այն ձևով, վոր հեռակայողը ամենաքիչ ժամանակ ծախսելով ստանա անհրաժեշտ գիտության վորակ, այդ նպատակով մտցնելով ուսման պլանի մեջ առկա ուսուցման ելեմենտներ և այլն:

2) Ուսման նյութերը կազմում է այնպես, վոր հեռակայողը ավելի դյուրին կերպով կարողանա յուրացնել այն:

3) Պակասեցնում է ստուգողական աշխատանքներին թիվն ու չափն այնպես, վոր այդ աշխատանքների ստուգման հիման վրա կարելի լինի պարզել, թե հեռակայողը վորչափով է յուրացրել նյութը:

4) Կոնսուլտացիաները և լաբորատոր պարապմունքները տեղափոխում է անմիջապես արտադրության մեջ, վոր զգալի չափով բարձրացնում է հեռակայողների ուսման տեմպը:

5) Միջնորդություն է հարուցում պետական, հաս-

սարակական և քաղաքական մարմինների առաջ հեռակայողներին բեռնաթափ անելու և նրանց մի շարք արտոնություններ տալու մասին:

6) Իր ապարատը վերակառուցում է այնպես, վոր ավելի լրիվ և ժամանակին կարողանա հեռակայողներին սպասարկել (հեռակայողներին ամրացնում է դասատուներին, մշտական տեղեկություններ է ուղարկում հեռակայողներին իրենց առաջադիմության մասին, նյութերը ժամանակին է ուղարկում նրանց և այլն):

7) Ուսումնասիրում է հեռակայողների ուսման վրա ազդող պատճառները, կոնֆերենցիաներ հրավիրելու (առկա և հեռակա), հարցացուցակներ կազմելու, տեղերը շրջակայքում միջոցով և այլն:

Իր հերթին, կետի վարիչը պիտի միջոցներ ձեռք առնի հեռակայողների ուսման տեմպերը և վորակը բարձրացնելու համար: Ուսման ինտենսիվության բարձրացման միջոցները զանազան են: Նրանցից գլխավորներն են՝

1) Հեռակայողների ամեն տեսակի բեռնաթափումը տնտեսական, կուսակցական և հասարակական գանազան տեսակի աշխատանքներից: Կետի վարիչը պետք է անտեսական-կուսակցական և պրոֆմիութենական մարմինների ուշադրությունը հրավիրի հեռակայողների ուսման գործի վրա, իրազեկ պահելով նրանց հեռակայողների ուսման ընթացքի, ամեն մի հեռակայողի ուսման, կետում ծագող դժվարությունների մասին և այլն:

2) Հեռակայողների համար կանոնավոր կոնսուլտացիաներ և լաբորատոր պարապմունքներ կազմակեր-

պելը: Ամեն մի հեռակայող պետք է լրիվ և ժամանակին սպասարկի կոնսուլտացիոն և լաբորատոր պարամունքներով: Կոնսուլտացիաներն ու լաբորատոր պարամունքները պետք է ունենան համապատասխան վորակ և գտնվեն իրենց բարձրութեան վրա: Իրա համար կետի վարիչը պիտի հոգ տանի, վոր մանկավարժական կազմն ունենա բավականին վորակ և միանգամայն ծանոթ այն նյութերին, վորոնք մշակվում են հեռակայողների կողմից:

Կետի վարիչը պետք է ձեռնարկութեան մեջ աշխատող ինժեներատեխնիկական աշխատավորներին ներգրավի հեռակայողների ուսման գործի մեջ և ընտրի նրանցից վորոշ թվով մասնագետներ, հեռակայողներին սխտեմատիկ կերպով կոնսուլտացիա տալու համար:

3) Սխտեմատիկ հսկողութուն հեռակայողների ուսումնառութեան վրա: Կետի վարիչը պետք է իրազեկ լինի, թե հեռակայողները ինչ նյութեր են ստացել և ինչ կարգով ու ժամկետում պիտի մշակեն այդ նյութերը: Հեռակայողներին ոգնելու ամեն տեսակի միջոցներ ձեռք առնելով հանդերձ, կետի վարիչը մյուս կողմից պետք է համապատասխան միջոցներ ձեռք առնի ներգործելու այն հեռակայողների վրա, վորոնք սխտեմատիկորեն յետ են մնում և չեն հասցնում նյութերի մշակումը: Նա պիտի այդ մասին ինֆորմացիա տա կուսակցական, տնտեսական և արհեստակցական մարմիններին, վորպեսզի նրանք այդ հեռակայողների նկատմամբ հանեն համապատասխան յեզրակացութեաններ մինչև հանդիմանութեանը և ուսանելու իրավունքից զրկելը:

